

Ամբաս Բիւրաս
Խմբագրութիւն «Փիիհնիկ»
Աղեփանդրիա



S. Burat
Rédaction «PUNIG»
Alexandrie

ԵԳԻՊՏՈՍ
Լր.՝
ՏԱՐԵԿԱՆ... 45
ՎԵՑԱՄՍԵԱՅ 25

ԲԱԺՆԵԳԻՆԸ
ԿԱՆԽԻԿ Է



ՓԻԻԿՆԻԿ

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ
Տր.
ՏԱՐԵԿԱՆ... 15
ՎԵՑԱՄՍԵԱՅ 8
—
ԿՈՎԿԱՍ
ՏՆԵԿԱՆ ՐԱՅԼ. 6



ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ


ՁԵՌՔԷ ԿԸ ԾԱԽՈՒԻ ՀԱՏԸ ՄԷՎ ԴՐՈՒՇ ՈՂՋ

Բ. ՏԱՐԻ

24 ՕԳՈՍՏՈՍ 1901

ԹԻԻ 13

ԱՂԵՔՍ. ԱԶԳ. ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ԳԱՂՏՆԻԻԸ



Արգոյ Տխար Խմբագիր «Փիւնիկ»
չարաքարերքի.

Ազգօգուտ շարժաթերթիդ ներկայ 9 թուոյն մէջ՝ տեղւոյս Պօղ. Ազգ. Երկսեռ Վարժարանին տարեկան հարցաքննութեանց քննադատութեան յօդուածին մէջ՝ խօսքը իմ մասիս ուղղելով առաջարկած էիք ինձ հրապարակ հանել բոլոր «Շարժառիթները», «Մթին Դաւերը», որոնք պարտաւորեցին զիս և իմ պաշտօնակիցներս հեռանալու վարժարանէն, պարզել վարժարանին նախկին ուսումնական կացութիւնը, և հրատարակութեան տալ ուսմանց յայտարարելը:

Ձեր հարցումներուն պատասխանելէ և Ձեր ակնարկած տխուր իրողութիւնները պարզելէ առաջ, որոնց ամբողջութիւնը երկար աշխատութեան և ժամանակի կարօտ է և զորս պիտի

չանամ կատարել յառաջիկային՝ եթէ ոչ իր բոլոր ընդարձակութեամբը դոնէ համառօտակի, թո՛ղ ներուի ինձ նախքանի մը տողեր տալ «Արշալոյս»ի 202 համարին մէջ երևցած Աղեքսանդրիոյ մասնաւոր քրքրակցիկ Պօղ. Երկսեռ վարժարանի տարեկան հարցաքննութեանց առթիւ գրած յօդուածին քանի մը կէտերուն, որոնց մէջ իմ մասիս ակնարկութիւններ եղած են:

Տխուր հարկ մ'է այս, զոր «... վճարեմ ստիպեալ, բայց օգտակարութենէ ալ զուրկ չէ, որովհետև Ձեր լուսարանուիլը փափաքած կէտերուն հետ սերտ առնչութիւն ունի:

Հարցաքննութիւններուն ներկայ եղած չ'ըլլալով (որովհետև քանի մը առանձնաշնորհեալ հրաւիրեալներուն մէջ իմ անունս ալ կայ եղեր առաջ, որ ապա ջնջուեր է չ'գիտեմ ինչ դիտումով) Ձեզ կը թողում Պ. յօդուածագրին Ձեր նկարագրածներուն բացարձակապէս հակառակ եղող կէտերն հերքել կամ ճշգրել, և կ'անցնիմ այն հաստատումներուն, որոնք ուղղակի ինձ կը վերաբերին:

Յաւալի իրողութիւն մ'է, որ ժամանակի յօգուածագիրներէն ոմանք չարկամութենէ, բարբաճանքէ, կամ ուրիշ գձուձ հաշիւներէ մղեալ իրենց գէշ ունեակութիւն մը բրած են առանց փաստի հաստատումներ հրապարակ նետել, սուտեր յերիւրել, խեղաթիւրումներ ընել, այս ու այն անձը անուանարկելու ջանալ են: Թէպէտ ատոնցմէ ոմանց լուրջ դասեր տըռեցան երբեմն, սակայն, ինչպէս առածը կ'ըսէ «մնացողին մէկ բաւ է, չիմացողին հազար խէր չըներ»:

Եթէ Պ. յօգուածագիրը (յօգուածին պարունակած պաշտօնական տեղեկութիւնները մեզ իջաւունք կուտան կասկածելու թէ՛ այս նամակին հեղինակը հանրածանօթ տիրահոչակ պարունը պիտի ըլլայ) բացէ ի բաց իր ստորագրութիւնը դրած ըլլար, գուցէ չ'պիտի զիջանէի մինչև իսկ պատասխանել, սակայն քանի որ թղթակից կեղծ անունն տակ ապատուանած է, սխալներէ եւ թիւրիմացութիւններէ զգուշացնելու համար ժողովուրդը, որուն ներողամիտ լուութիւնը և բարի ու պարզ սիրտը այնչափ կը շահագործուի վերջերս, ստիպեալ եմ քանի մը բացատրութեանց մէջ մտնել:

Պրն. յօգուածագիրը վարժարանի արդի վիճակը ուսումնասիրել եւ կատարուած քննութիւններու մասին դադար կադմել ուզողներուն կ'առաջարկէ բաղդատութեան զնել անցեալ եւ նախընթաց տարուան քննութիւնները այս տարուաններուն հետ, եւ կ'աւելցնէ. «Անցեալ տարի Տնօրէնը բնաւ քննութիւն կատարել չուզեց, որովհետև իր հիւանդութեան պատճառաւ չարթներով վարժարանէն բացակայ գտնուած ըլլալով՝ ժամանակ ունեցած չէր իր դասերը կրկնել տալ և հետևաբար կը վախնար ոչ իր աշակերտները փայլուն քննութիւն մը չի տան: Մասնաւոր քննութիւն» անուան տակ տեսակ մը դասախօսութիւններ կատարուեցան որոնց ինք միայն ներկայ գտնուեցաւ, իսկ իր աւանդած

դասերուն և ոչ իսկ իր պաշտօնակիցները հրաւիրեց: Այս ի ողութեան հանդէպ, չենք կարող վարժարանի այս տարուան վիճակը բաղդատութեան զնել անցեալ տարուանին հետ, զի անցեալ տարուանը չենք գիտեր: Գալով նախընթաց տարուան վիճակին, այս տարուան քննութիւնք իրենց ամբողջական հանգամանքով յուեգոյն վիճակ մը չէին ներկայացներ: Եթէ նախընթաց տարին, կրկնութիւններու բացառիկ ուժով մը, մէկ երկու ճիւղեր փայլուն էին, այս տարի ալ տարբեր ճիւղեր, մանաւանդ Մայրենի Լեզուն (1) և Արաբերէնը ալ աւելի փայլուն անցան եւ ընդհանուր գոհունակութեան արժանացան:

Իրաւ է որ անցեալ տարեշրջանին վերջերը ես հիւանդ եղած եմ, և աշակերտները իմ աւանգած դասերս կրկնելու ժամանակ չեն ունեցած, սակայն ո՞վ ըսած է Ձեզ, Պ. յօգուածագիր, որ ես բնաւ քննութիւն կատարել չեմ ուզած, վախնալով որ իմ աշակերտներս փայլուն քննութիւն մը չ'տան: Պախընձի-ութեան ալ սկսաք, կը շնորհաւորեմ Ձեզ, շատ շահաբեր է այս երկրին մէջ:

Ակնարկուած իրողութիւնը հետևեալն է: 1899 թուականին ուսումնական տարեշրջանին վերջերը հրապարակային քննութեանց մասին կարծեաց տարբերութիւն յառաջ գալով Պատ. Հոգաբարձութեան անդամներուն մէջ, Մեծ. Տիարք Լ. Աժտէրեան (Ատենապետ Հոգաբարձութեան) և Ա. Ճէվահիրճեան Գանձապետ) թեր, իսկ Մեծ. Տիար Տ. Կամսարական (Ատենադպիր) գէժ քուէ տուին, հետևաբար ձայնբու մեծամասնութիւնն յարգուելով քննութիւնները կատարուեցան հրապարակաւ: Չմտանանք յիշելու նաեւ թէ այն ժամանակուան Պատ. Թաղա-

(1) Եթէ Պ. Մ. Նարսուկեանին դասին ակնարկել կ'ուզէ, լաւ իսկ Պ. Մ. Ասխանազին հայերէնը տեսնէ արդէն ու գրեցինք...
Մ. Խ.

կան Խորհրդոյ Փոխ-Ատենապետը Մեծ. Տիար Ա. Կամսարական նոյնպէս իր եղբորը կարծիքէն էր, և երբ հրապարակային քննութիւնները կատարուցան, ոչ միայն ներկայ չգտնուեցաւ բնաւ, այլ և ծանր նկատողութիւններ ուղղեց մեզ այդ մասին: Ուստի անցեալ տարի, երբ Հոգաբարձութեան պաշտօնը յանձնուած էր միայն Տիար Տ. Կամսարականին, և իրեն քաղաքէս բացակայութեանը միջոցին իր եղբորը, դիտնալով երկուքին ալ հրապարակային քննութեանց դէմ ունեցած բացարձակ հակառակութիւնը, ապագայ տհաճութենէ խուսափելու համար իրենց քաղաքէս բացակայութեան պատճառով ևս պարտք համարեցի դիմել Վսեմ. Կարապետ Պէյ Բէիզեանին, որ այն ժամանակ Թաղ. Խորհրդոյ Փոխ-Ատենապետն եղած էր: Նորին Վսեմութիւնը իմ բացատրութիւններս լսելէն յետոյ՝ պատուիրեց ինձ հրապարակաւ չկատարել հարցաքննութիւնները: Ահա թէ ինչո՞ւ հրաւիրագիրներ չ'ուղարկուեցան մեր նախկին սովորութեան համեմատ տեղւոյս բոլոր Ազգ. մարմիններուն, երեւելի ազգայիններուն, քաղաքս գտնուող և ժամանակին ուսուցչութեան պաշտօն վարած դասատուներուն ևն: Բայց ես հետեւելով վարժարանիս նախկին սովորութեանը, հրաւիրագիրներ դրեցի հոգեւորական դասուն, Պատ. Թաղ. Խորհուրդին, նոյնպէս հրապարակաւ պատուիրեցի աշակերտներուն, որ լուր տան իրենց ծնողացը և ծանօթներուն՝ ուզած ժամանակին ներկայ գտնուելու քննութեանց, եւ շնորհակալ եմ որ հոգեւորական դասը, ծնողքներ, հետաքրքիր անձեր, ինչպէս և Թաղ. Խորհրդոյ անդամներէն մէկը, որ այն ժամանակ քաղաքս կը գտնուէր, հաճեցան իրենց ներկայութեամբը քաջալերել աշակերտները. եւ մեր հարցաքննութիւնները՝ դասախօսութեան շրջանին պահանջներէն շատ հեռու ըլլալով տեւեցին 18 օր, մինչդեռ այս տարուանը մէկ շաբաթ: Արդ, Պ. յօդուա-

ծագի՛ր, այս տարուանը հրապարակային իսկ անցեալ տարուանը «մասնաւոր քննութիւն» անուան տակ մկրտելով ի՞նչ տարբերութիւն կուզէք դնել, կուզէք ըսել թէ՛ չորս հայ բժիշկներ եւ երկու ուրիշ ազգայիններ աւելի՞ հրաւիրած էք, որոնցմէ առաջինները երբէք, իսկ վերջին երկուքը օր մը միայն ներկայ գտնուած են: Գուցէ ըսէք թէ այս տարի Ս. Առաջնորդը ընդհ. հսկողութիւն կատարեց: Շատ լաւ. բայց եթէ անցեալ տարի Պատ. Թաղ. Խորհուրդը չուզէր կամ չը մտածեց այսպիսի հսկող մը կարգել, հոգեւորական կամ աշխարհական, մի՞թէ անօրէնն է մեղաւորը, կամ դիս յանցապարտ կը նկատէք Թաղ. Խորհուրդին այդպիսի խելք մը չը սովորեցնելու համար: Ի՞նչո՞ւ չչտապեցիք կատարել այս սրբազան պարտականութիւնը, դուք որ այնչափ մօտիկ յարաբերութեան մէջ կ'երևիք վարժարանին հետ հոգևով ու մարմնով: Ա՛լ ձգեցէ՛ք պարզամիտներու աչքին փոշի նետելու սգեղ արհեստը:

Պ. Յօդուածագիրը կրսէ թէ՛ անցեալ տարի «մասնաւոր քննութիւն» անուան տակ տեսակ մը դասախօսութիւններ կատարուեր են, որոնց եւս միայն ներկայ գտնուէր եւ, իսկ իմ առանձնաբար դասերուս եւ ՈՁ իսկ պաշտօնակիցներս հրաւիրած եւ: Պ. Յօդուածագիր, եթէ դուք այն ժամանակուան պաշտօնակիցներէս մէկն էք, այս խօսքերով շատ տխուր գաղափար մը կազմել կուտաք Ձեր նկարագրին վրայ, որ ականատես՝ դուցէ և մասնակից ըլլալով այս անարգ խաբեբայութեան, անմիջապէս չէք շտապած բողոքել և տեղեկագրել Պատ. Թաղական Խորհուրդին և Հոգաբարձութեան. իսկ եթէ պաշտօնակիցս չէք, քանի որ կատարուած քննութիւններուն եւս միայն ներկայ գտնուէր եւ, բաց ի իմ պաշտօնակիցներէս ո՞վ կրնայ վկայել թէ կատարուածները դասախօսութիւններ էին թէ քննութիւն: Հրապարակաւ հրաւէր կը կարդամ այն ժամանակուան

իմ բոլոր պաշտօնակիցներուս, որ իրենց յայտնի ստորագրութեամբը հաստատեն որ, իրենց աշակերտներուն անցուցած կամ իրենց հանդիսատես եղած՝ ընկերներուն քննութիւնները դասախօսութիւններ են եղած: Եթէ այդպիսի յայտնի, բաց և մեկին յայտարարութիւն մը չերևի հրապարակաւ, Պ. Յօդուածագիր, ես ձեզ պիտի անուանեմ անարգ ստախօս, ոչ կը համարձակիք ամբողջ ուսուցչական խումբի մը մէկ տարուան քրտնաթոր աշխատութիւնը ոտնակոխ ընելով անպատուել զիրենք իբր աչքակապուկ խաղացող խաբէրաներ:

Հապա իմ աւանդած դասերուս քննութիւններուն՝ դասախօսութիւն ըլլուն ո՞վ վկայած է կամ պիտի վկայէ, քանի որ իմ քննութիւններուս եւ ոչ իսկ պաշտօնակիցներս հրախրած եմ: կերևի ասոր ալ վկաները աշակերտներս եղած պիտի ըլլան: Այստեղ Պ. Յօդուածագիրն տրամաբանութիւնը հիանալի է: Արդեօք ձեր դրածները կրկին աչքէ անցընելու նեղութիւնը երբէք յանձն չէ՞ք առներ: Ո՞վ վարժարանական պաշտպան հերո՞ս, ինչպէ՞ս կրցաք Յովնանեան քունով խորդալ ամբողջ տարի մը, և այսօր արթնցաք հրապարակ նետելու ձեր այդ անդին յայտնութիւնները. կերևի դուք ալ «գէշ մարդ չըլլալու» քաղաքականութեան կը հետեւէիք այն ժամանակ:

Կ'ըսէք թէ, ես իմ պաշտօնակիցներս չեմ հրաւիրած քննութիւններուս: Եթէ կուզէք ըսել թէ հրաւիրագիր չեմ ուղարկած անոնց որպէս զի իմ քննութիւններուս ներկայ գտնուին, կ'ընդունիմ. որովհետեւ ոչ տեսած եւ ոչ ալ լսած եմ որ Տնօրէն մը իր դասերուն քննութեանց ներկայ ըլլալու համար հրաւիրագիրներ ուղարկէ իր պաշտօնակիցներուն, իսկ եթէ ըսել կ'ուզէք թէ բերանացի հրաւէր եղած չէ, ասոր վկայութիւնը ձեզմէ չէ՞ որ պէտք է լսեմ, այլ իմ այն պաշտօնակիցներէս, որոնց հրաւէր չեմ կարգացած, կամ աւելի ճիշդը՝ արգելք ե-

ղած եմ ներկայ գտնուելու: Եթէ այդպիսի թէկը կայ, թո՛ղ հրապարակաւ, իչ ստորագրութեամբը յայտնէ. եթէ ոչ դուք երկրորդ անգամ արժանի կ'ըլլաք ձեզի սահմանուած վերոյիշեալ ամականին:

Պարոն յօդուածագիրը նախընթաց տարուան քննութիւնները այս տարուանին հետ բազդատութեան դնելով կ'ըսէ. «Նախընթաց տարին, կրկնութիւններու բացառիկ ուժով մը, մէկ երկու ճիւղեր փայլուն էին: Ի՞նչպէս խղճի խայթ չ'ունեցաք այսպիսի խոտովանութիւն մը ընելու»: Պ. յօդուածագիրը կ'երևի մուցաւ իր քանի մը տող վերը դրած այն խօսքերը, որով կը յայտնէր թէ անցեալ տարի աշակերտները իմ աւանդած դասերուս կրկնութիւնը ըրած չ'ըլլալուն, ես կը վախնայի հրապարակային քննութիւններ տալու: Եթէ բացառիկ կրկնութիւններու գրութիւնը ընդունուած էր, ուրեմն ի՞նչպէս կ'ըլլար որ անցեալ տարի նոյն գրութիւնը չէր գործարուած ամբողջ տարեշրջանի տեղութեան միջոցին, որովհետեւ իմ հիւանդութիւնս՝ որ շուրջ 3 շաբաթ և քիչ մը աւելի տեւեց, տեղի ունեցաւ ճիշդ հարցաքննութիւններէն անմիջապէս առաջ, ըսել է Պ. յօդուածագիրը կ'ընդունի թէ դասաւանդութիւնները առանց ընդհատման կը շարունակուին եղեր մինչև տարեշրջանին վերջին շաբաթները, և այդ շաբաթներուն մէջ միայն կրկնութիւններով կ'զբաղինք եղեր, որ իբր ընկալեալ սովորութիւն ո՛ր եւ է քացառիկ հանգամանք մը չունի:

Այս բացառիկ գրութիւնը գործադրողը ե՞ս եմ եղած միայն թէ պաշտօնակիցներս ալ: Բացառիկ կրկնութիւններ ընելու համար ուսուցիչ մը կամ իր դասերուն համար յատկացեալ բազմաթիւ պահեր ունենալու է, որ ապահովապէս իմիններուս համար չէ եղած, զոր կրնամ ցուցնել թուանշաններով, կամ ծրագրին գծած սահմանին մէկ մասը միայն անցնելու է, բայց ես

կրնամ ապացուցանել թէ միշտ դժուած սահմանէն աւելին անցած եմ: Իսկ եթէ քիչ պահերով ծրագրին պահանջներն լրացնելով հանդերձ կարողացեր եմ կրկնութիւններ ընել, ո՛չ մանկավարժութեան՝ դէմ յանցանք մը, ո՛չ ալ ժողովուրդը խտրելու տխուր պաշտօն մը կատարած եմ: Սակայն իշականութիւնն այն է որ ես տարեշրջանին մինչեւ վերջին օրերը կրկնութիւններու ժամանակ տալու սովորութիւն չ'ունիմ: Հապա միւս ուսուցիչները, որոնք ինծի պէս հիւանդ ըլլալու դժբաղդութիւնը չ'էին ունեցած, և բնականաբար օգտուած պիտի ըլլային բացառիկ կրկնութիւններու դրութեանէն, մի՞թէ կը կարծէք որ փոխ"նակ իրենց ջանքերուն աղբիւնքը մէջտեղ բերելու պիտի զիջանէին ստորնանալ հարցաքննութիւն անուան տակ դասախօսութիւններ ընելու: Արդեօք ի՞նչպէս կը ներէք ձեզ առանց հաստատուն փաստերու, այնչափ անխղճօրէն վիրաւորել ամբողջ ուսուցչական խումբի մը աշխատապատուութիւնը:

ՅԱԿՈՔ ՊԷՔԱՐԵԱՆ
(Շարունակելի)

Ներկայ գրութիւնը հրատարակելով կը յայտարարենք թէ՛ Եգիպտոսի անդրանիկ Հայ Տպագրիչ Մեծ. Տիար Ս. Իարբինեանի սոյն ձեռնարկը՝ տեսակին մէջ միակ, անփոփոխ օգտակարութեամբն ու շահեկան բնութեամբը հանրային գնահատման ու ամեն կողմէ քաջալերանքի արժանի է իրաւամբ:

ԵԳԻՊՏԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՅՑ

Ժամանակիս մէջ ամեն ազգի ժողովրդոց ընծայուած պէսպէս գիւրութիւններուն օր օրի յաւելումը ի նկատ ունելով Եգիպտոսի մէջ մեր հայ գաղութն ալ իր կարգին չ'զրկելու փափաքով ձեռնարկեցի ԵԳԻՊՏԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՅՑ անուն գրքի մը որ լոյս պիտի տեսնէ իմ սեփական տպարանէս «Կիտ

Էտիբաիէն»ի գրքին աւելի մի նորագոյն հետեւողութեամբը:

ԵԳԻՊՏԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՅՑ գիրքը ինչպէս կը տեսնուի անունէն, ուղի մ'է ըստ կարեւոյն պատրաստուած այնքան խնամով, որուն գիմող ախն մի Հայ պիտի կրնայ գտնել խնդրածը առանց ուրիշ ու է է առաջնորդի և զբոսարարութեան:

ԵԳԻՊՏԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՅՑը պատկեր մը կամ հայելին է Եգիպտոսին յորմէ ամեն ոք հատ մը ունենալէ յետոյ իրաւամբ պիտի խոստովանի գործին կարեւորութիւնը իր այլազան առաւելութիւններովը ճոխ ու մաքուր:

ԵԳԻՊՏԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՅՑը պիտի պարունակէ ամբողջ Եգիպտոսի ընակչաց քանակութիւնը իր բաժանումներով կառավարական վերջին «Սթաթիսթիք» ին համաձայն:

ԵԳԻՊՏԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՅՑը պիտի պարունակէ տեղացի ու օտար ժողովրդոց իրարու հետ ունեցած կապակցութիւնը արհեստական ու վաճառականական տեսակէտով:

ԵԳԻՊՏԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՅՑը պիտի պարունակէ բերքերու քանակութեան տեսակին եւ փոխադրութեանց մասին կարեւոր տեղեկութիւններ ինչպէս եւ արտածումի եւ ներածման մասին ճշգրիտ գիտելիքներ:

ԵԳԻՊՏԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՅՑը ամենուն պիտի ծառայէ մինչև իսկ Եգիպտոսը անգամ մ'իսկ չ'կրցող այցելողին, անոնք եւս հաճոյքով պիտի կարդան պարունակած ծանօթութիւններէն զատ՝ պատմական տեղեկութիւններ անցեալ ու ժամանակակից փոփոխութիւններէն:

ԵԳԻՊՏԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՅՑին մէջ եգիպտական հարստութեանը վրայ անցելոյն ու ներկայի բազդառական տարբերութիւնները պիտի գծուին և դիւաւորաբար երկրին այժմեայ բարւոք մատակարարութեանը առթիւ կառավարական դանձուն օր օրի ճոխանալուն նկատմամբ տեղեկութիւններ պիտի տրուին:

ԵԳԻՊՏԱԿԱՆ ՈՒՂԵՅՈՅՅԷՆ պիտի զիտնանք թէ որո՞նք են Եգիպտոսի բարձր պաշտօնեաները եւ ո՞ւր անոնց պաշտօնատեղիները. քաղաքային ու գինուտրական իշխանութեանց կեդրոնները, տեղական և միջազգային դատարանները, օտար պատրիարքարանները, ամենքն իրենց կեդրոնական տեղերովը պիտի նշանակուին, ինչպէս և անոնց մէջ ծառայող գլխաւոր պաշտօնէից անունները:

ԵԳԻՊՏԱԿԱՆ ՈՒՂԵՅՈՅՅԷՆ մէջ պիտի նշանակուին Երկաթուղոյ, Հեռագրատան, Փոստի, Տոմէնի, Մաքսատան և այլ պաշտօնատանց կեդրոնատեղիները, ուրոյն ուրոյն իւրաքանչիւրին կառավարութեանը ձգած տարեկան շահու քանակութեամբը հանդերձ:

ԵԳԻՊՏԱԿԱՆ ՈՒՂԵՅՈՅՅԷՆ մէջ պիտի նշանակուին Զուրի, Թրամվայի, Ելեքտրիկի, Կազի և ուրիշ ագսիօնական ընկերութիւններու անուններն իրենց հաստատութեանց թուականներովը ու նորագոյն գործառնութիւններովը հանդերձ:

ԵԳԻՊՏԱԿԱՆ ՈՒՂԵՅՈՅՅԷՆ մէջ չ'պիտի անտեսուին կառավարական բարձրագոյն դպրոցներն, տպարաններն եւ օտար ազգութեանց վերաբերող դպրոցներն ու անոնց տարեկան ծախուց և հասուցած աշակերտաց որքանութիւնը:

ԵԳԻՊՏԱԿԱՆ ՈՒՂԵՅՈՅՅԷՆ մէջ պիտի նշանակուին հայ և օտարազգի բժշկաց, փաստաբանաց և ճարտարագիտաց անուններն, իրենց կարգին՝ բնակութեան տեղերովը, ինչպէս նաև Եգիպտոսի առաջնակարգ դեղաբանները՝ իրենց հրապարակային ծանօթ անուններովը:

ԵԳԻՊՏԱԿԱՆ ՈՒՂԵՅՈՅՅԷՆ մէջ պիտի նշանակուին ամեն ազգի բարեսիրական և մարդասիրական նպատակներու վերաբերող ընկերութեանց ու անոնց ժողովականներու անուններն՝ յիշելով հանդերձ անոնց նպատակին վերաբերող մարդասիրութիւններն ու

բարեգործութիւնները:
Վերջապէս ԵԳԻՊՏԱԿԱՆ ՈՒՂԵՅՈՅՅԷՆ մէջ պիտի պահուտ ու ընդարձակածաւալ տեղեկութիւններով՝ որոնք ակններև են թէ չ'պիտի բաւեն յայտագրիս մէջ մի առ մի ամփոփել, իր տեսակին մէջ միակը ըլլալու կոչումով՝ աւելի եւս պիտի հիացնէ իւր ընթերցողները այն դողարիկ ու դրական գրուածներուն համար, զոր պահարանի մը մէջ պահուած դանձի մը պէս, ԵԳԻՊՏԱԿԱՆ ՈՒՂԵՅՈՅՅԷՆ պիտի պահէ իր մէջ, իր ծոց կրելով նաև դրագէտներու գրչէն կաթած թարմ ու գեղեցիկ կտորներ, և հուսկ ուրեմն ամենը միասին կազմելով այնքան խնամօք ու զոհողութեամբ պատրաստուելիք Ուղեցոյցը՝ որուն հեղինակին փառքը կը կազմէ հասարակութեան արդար եւ արժանաւոր դնահատութիւնը:

Առ այդ իր բոլոր վստահութիւնովը ու սրտի խորին շնորհակալութիւնովը կը մնայ իր եղբայրակիցներուն միշտ յարգանօք:

ՍԱՐԳԻՍ ԴԱՐՔԻՆԵԱՆ

Գահիրէ, 4 Օգոստոս 1901

ԲԱՅ ՆԱՄԱԿ

Առ Տիար Եղիշէ Թորոսեան Տնօրէն - Խմբագիր «Արշալոյս» լրագրոյ
Գահիրէ

Ներկայ նամակս փոխանակ ուղղակի ձեղի զրկելու, հրատարակութեան տալուս նպատակը, տարակոյս չի կայ որ, առանց իսկ անոր պարունակութիւնը կարգալու, պիտի դուշակէք, եթէ ձեր վերջին մի քանի օրուայ ընթացքին վրայ լրջօրէն մտածած և հանդէպ հասարակութեան անիրաւութիւննիդ ճանչցած էք:

Հակառակ դրաւոր խոստումներն ուղբ եւ մաս մ'ալ դրամ գրպանելն ուղբ, Տիար Գալֆաեանի կողմանէ եւ ստորագրութեամբ ձեզի յանձնած յոգ-

ուածս չհրատարակելնիդ կուզեմ ակնարկել:

Չեմ կարծեր որ տեղոյս Թաղական Խորհրդոյ դրագիր, Տ. Լևոն Մկրտիչեանի, պաշտօնական կամ անպաշտօն հրահանգները կամ սպառնալիքները այն աստիճանի շուարեցուցած և սարսափեցուցած ըլլան զձեզ, որ նոյն իսկ մտացած ըլլաք, լրագրապետի մը կամ խմբագրի մը ամենամեծ պարտականութիւնը, այսինքն այն յարգանքը որ ամեն լրագրապետ պէտք է տածէ առ իւր ազգը և ազգակիցքը:

Նամակիս մէջ աւելորդ չեմ սեպեր ձեզ յիշեցունել ամբողջ եղելութիւնը, որով թէ սխալ հասկացողութեան տեղի չի տրուիր և թէ կերպով մ'ալ ընթերցող ազգայնոց գաղափար մը տուած կըլլամ «Արշալոյս»ի Տնօրէն Խմբագրին պատուոյն եւ արժանիքին վրայ:

Ահաւասիկ իրողութիւնը:

Ամսոյս 10ի շաբաթ օրը, երբ Գահիրէ կը գտնուէի, մօրեղբօրմէս, Տիար Մ. Գալֆաեանէ հեռագիր մը ստացայ, որով կը յանձնարարէր ինձ, նոյն օրը Աղեքսանդրիա չ'վերագառնողով, իւր նամակին սպասել: Կը յանձնարարէր նաև որ «Արշալոյս»ի Տնօրէնին հետ, այսինքն ձեզի հետ ժամագրութիւն մ'ընեմ հետեւեալ օրը, կիւրակէ առաւօտեան համար:

Անմիջապէս դիմեցի խմբագրատուննիդ եւ ժամագրութիւն տուինք կիւրակէի համար: Երկուքնիս ալ անտեղեակ էինք Տիար Գալֆաեանի հեռագրին տեղի տուող պարագաներուն, բայց դիւրին էր դուշակել որ Տ. Լևոն Մկրտիչեանի ստորեանց և հայկոյանաց տպագրութիւնի Տնօրէնի մէջ երևնալովը, ժողովուրդը կամ անոր ո եւ է անհատը անտարբեր չէր կարող և պէտք չէր մնալ և թէ վերջապէս մտածուած էր հարկ եղած միջոցները ձեռք առնել իրաց ներկայ կացութեան վերջ մը դնելու համար:

Ժամագրութիւննիս որոշեցինք որբեմն կիւրակէ առաւօտ ժամը 10ին:

Կիւրակէ օր կանուխէն արդէն ստացած էի Տիար Գալֆաեանի նամակը որոյ մէջ հետեւե սը կը գրէր.

Սիրելի Վահանս,

«Այս առտուան հեռագրիս համար «ձայն յուսամ թէ «Արշալոյս»ի Տնօրէնին հետ վաղն առտուան համար «փնտուելու պէտք չունենաս»:

«Ներփակ կը գտնես յօդուած մը որնոր կուզեմ իմ ստորագրութեամբս հրատարակուի անպատճառ այս յորեքշաբթի թիւին մէջ, նոյն իսկ եթէ կարելի է, կը փափաքեմ որ իմ մասնաւոր ծախֆովս այս երկուշաբթի «Արշալոյս»ի յաւելուած մը ելլէ այդ յօդուածս պարունակող եւ «Արշալոյս»ի բոլոր բաժանորդներուն զրկուելէ զատ 200 հատ ալ ինձ զրկուի, իսկ եթէ Յաւելուած չըլլար՝ չորեքշաբթի թերթէն 200 հատ ինձ յատկացուի»:

«Որովհետև լրագիրները չ'հրատարակուած ձեռագիրները ետ չեն տար, անոր համար անձամբ կարգացուր յօդուածս և եթէ (ինչպէս որ կը յուսամ) կը խոստանայ հրատարակել, այն ատեն յանձնէ՛, բայց ստորագրութիւն մը առնելով թէ Մ. Գ. է Օգոստոս 10 թուական և 7 երեսներէ բաղկացած յօդուած մը ստացած է զոր կը խոստանայ յառաջիկայ չորեքշաբթի (Օգոստոս 14ի) թերթին մէջ հրատարակել առանց ամենափոքր փոփոխումի: Յուսամ թէ Աղեքսանդրիոյ Թաղ Խորհրդոյ հետ ունեցած իւր նոր կապերը այն աստիճանի կաշկանդած չեն զինքը որ յօդուածիս հրատարակութիւնը չի մերժելու չափ անկողմնակալութիւն պահած չըլլայ դեռ»:

«Անձնուէր Մօրեղբայրդ

Միհրան Գալֆաեան»

Չէք կարող ուրանալ զայս՝ քանի որ երբ կիւրակէ օր որոշեալ ժամուն զձեզ տեսայ, առաջին դործս եղաւ այդ նամակը կարգացնել ձեզ, իսկ յետոյ պարունակած յօդուածը որոյ ամէն մի էջերը թղթատած միջոցնուդ, դիմագծերնուդ արդէն կռահեցի որ ձեզի դժուար կերևար ընդունիլ եւ

հրատարակել այնպիսի գրութիւն մը որ պիտի ծառայէր ձեր բարերարին, այսինքն Աղեքսանդրիոյ Թաղ. Խորհրդոյ քով ձեզ համար ձրիաշար բարեխօսող անձին, կամ աւելի բաց ըսեմ, Տիար Լևոն Մկրտիչեանի դիմակը վար առնելու եւ նորա գրած «Սահմանագրութեան Պաշտպանները» վերնագրով յօդուածին պարունակութենէն ժողովուրդը հոգեւորօր զարթոյնեցնելու բաւական ճշմարտութիւն մ'ալ սփռելու նորա խաւերուն մէջ:

Յաւելուածը կարգացիք, անգամ մը եւ կարգացիք, իսկ երրորդ անգամ մ'ալ կարգալէ յետոյ յայտարարեցիք որ մտածելու համար օր մը ժամանակ կուզէիք:

Ձէի կարող մեղադրել զձեզ, իրօք ալ տու նուազն օր մը պէտք էր որ հրահանդ խնդրէիք Աղեքսանդրիոյ մեծաւորներնուդ, որոնք ըստ ձեր յայտարարութեանց, «Արշալոյս»ին գոյութիւնը ապահոված էին: Իժբաղդաբար, չկրցայ ձեզ տալ օր մը ժամանակամիջոց, քանի որ միևնոյն օրը երեկոյին Աղեքսանդրիա վերադառնալու հարկադրուած էի. հետեւաբար, որոչեցինք նոր ժամադրութիւն մը, երեկոյեան ժամ Յին 'ի Սըլէնտիա Պար, ուր որոշեալ ժամուն զիրար դտանք:

Հարցուցի թէ ի՞նչ էր որոշումնիդ, ահաւասիկ պատասխաննիդ:

«Քանի որ Տիար Գալֆաեան կը փափաքի, ես ալ իրեն գոհացում պիտի տամ, նոյն իսկ եթէ գիտնամ որ թերթս բոլորովին պիտի կործանի: Արդէն պէտք եղած հրահանգները տուած եմ գրաշարիս որ վաղը կանուխէն տպարան դալով սկսի շարել յօդուածը որպէս զի մասնաւոր «Յաւելուած»ով երևան գայ վաղ երեկոյ անպատճառ»:

Այս ըսելով աւելցուցիք թէ բացառիկ ծախուց համար գումար մը վճարելու հարկ էր. չմերժեցի, և անմիջապէս անդղիական ոսկի մը վճարելով հանդերձ, խոստացայ Յաւելուածի երևնալուն բացառիկ ծախքեր:

նոր մնացորդն ալ վճարել Տիար Գալֆաեանի կողմանէ:

Իսկ յօդուածը ձեզ յանձնեցն մասնաւոր նամակաւ մը որոյ պատասխանեցիք սա պէս:

Գահիրէ 11 Յոգոստ 1901

Սիրելի Բարեկա՛մ,

Տիար Վահան Խորասանեան

ի Քաղաքիս

Բարեկա՛մ. — Ստացայ այսօրուան քուականաւ ձեր նամակին ներփակեալ Մեծ. Միհրան Էճէնի Գալֆաեանի կողմէ ստրագումած 7 էջերէ բաղկացեալ յօդուածն:

Ինչպէս որ կը յայտնէք թէ Միհրան Էճէնի կը փափաքի որ իր գրութիւնն «Արշալոյս»ի Յաւելուածով երեսան գայ ես ալ պիտի ջանամ այս առթիւ որպէս զի իր փափաքը գտնէ իր գոհացումը եւ Յաւելուածը երեսայ վաղը գիշեր եւ բաժանորդաց ցուելէ վերջ, 200 օրինակ իրեն դրկուի փոսդի միջոցաւ»:

Ընդունեցէ՛ք յարգանքներս

Ե. Թորոսեան

Խոստումնիդ գրպանս, բաժնուեցայ ձեզմէ և հեռագրեցի Տիար Գալֆաեանի թէ իւր յօդուածը պարունակող Յաւելուած մը երևան պիտի գար երկուշաբթի երեկոյ, և յետոյ մեկնեցայ դէպ ի Աղեքսանդրիա ուր բերանացի կերպով ալ ապահովուցի Տիար Գալֆաեանը թէ «Արշալոյս»ի Տնօրէնը, թէ եւ բաւական դժուարութեամբ, բայց վերջապէս խոստացած էր յօդուածի հրատարակումը մասնաւոր Յաւելուածաւ:

Երկուշաբթին անյաւ, երեքշաբթի առաւօտ ի զուր կսպասենք «Յաւելուածին», զարմանքնիս մեծ է:

Տիար Գալֆաեան, առանց յապաղման կը հեռագրէ ձեզ հետեւեալը:

Անմիջապէս հեռագրաւ խմացուցէք յօդուածիս չերևնալուն պատճառը, քանի որ խոստացեր էիք երէկ մասնաւոր յաւելուածաւ հրատարակել եւ

Վոխարէնին համար ալ դուռնար մ'առած էք, *réponse payée.*

Գալֆան

Փոխանակ ուղղակի Տիար Գալֆանին պատասխան մը տալու, բառականացաք հետեւեալ 3 բառը ինձ հռապրել.

«Բօսդը նամակ ունիք.

Թորոսեան»

Մեծ հանճար մը պէտք չէր հասկընալու համար որ յօդուածի հրատարակման խնդիրը արդեւքի մը պատահած էր, բայց աւելի ազահով ըլլալու համար, աւելորդ չտեսայ ի՞նչ կողմանէ ալ հետեւեալը հռապրել ձեզ.

Aucune lettre poste, télégraphiez si supplément parvi, oui ou non, inutile tergiverser, reponse payée.

Kborassandjian

(Թարգմանութիւն)

Բօսդը նամակ չիկայ, հետագրեցեք եթէ Յարեղուածը երեսն եկաւ, այդ կա՛ն ո՛չ, հարկ չիկայ շխախուսի մաւրայ բռնեղու, պատասխանը վճարեալ է:

Խօրասանճեան

Ստացայ պատասխանդ որ է.

«Բօսթան նամակ ունիք, հոն բացարած եմ կարելի չափով, երեկոյին ալ նամակ ունիք, անկէ վերջ կը տեսնուինք»:

Իսկ ժամը 9 1/2 ին նամակատունէն կտանսրջի վերոյիշեալ հեռագիրներով ձ աւեւած նամակդ որնոր ամբողջութեամբը կարժէ արտատպել հոս:

Գահիրէ 13 Օգոստոս 1901

Սիրելի Բարեկա՛մ

Տիար Վ. Խօրասանճեան

Աղեֆսանդրիս

Բարեկա՛մ. — զարմանալի է որ Միհրան էֆէնիի usուագրութեամբ մեզի յօդուած մը դրկելէ վերջ ի հրատարակութիւն — անուոս հրատարակելու միջոցներ պակաս լինելուն համար —

Երկուսքի առատօս ստացանք «Արախ»ի Տարանին մէջ հրատարակուած Շարաքաքերը, Յանելուածով մը եւ պարունակութեամբ գրեթէ նման այն յօդուածին, որ Միհրան էֆէնի, ձեր միջոցաւ մեզի կը դրկէր ի հրատարակութիւն:

Ինչին էր մակաբերել թէ՛ Շարաքաքերին մէջ երեցած Յօդուածի մը յար եւ նմանը կարելի չէր որ «Արախ» ընդունէր. ըսելէ որ ձեր ինձ հետ ունեցած բարեկամութիւնը իբր նկուստ պիտի գործածէիք այս պահուն. կը ցախիմ որ այդ տեսակ սխալի մը կառաջնորդէիք զիս. սխալ մը, որուն համար «Արախ» ինք իրեն համար չը պիտի ներէր, երբ ձեր բարեկամութեան սիրոյն համար իյնար անոր մէջ:

Ձեր ինձ դրկած յօդուածը որչափ ալ ձեզ նման ինձմէ շատ յարգուած անձնատրութեան մը կողմէ usուագրուած ըլլայ, դժբաղդ եմ խոստովանելու որ չ'պիտի կարենամ ընդունիլ «Արախ»ի մէջ, քանի որ կը տեսնեմ թէ այդ խնդրով արդէն զբաղող մը կայ եւ ես չեմ կարող արձագանքը ըլլալ մէկուն, որը սկիզբէն ի վեր յարգած չէ գոյութիւնը «Արախ»ին եւ եղած է որ մը որ «Հայ մամլոյն աղբը, անջնջելի արաքը» կոչուած է զայն: Մե՛ղ իր խելին. . . :

Ձեր անմեան եւ ազնիւ արժիւն թողով ներել այս առթիւ ձեզ ծառայութիւն մը չ'կարենալ մասուցանելուս համար:

Մնամ խորին յարգանքով

Յ. Թորոսեան

Իսկ երկրորդ հեռագրովնիդ իմացուցած ուրիշ մի նամակնիդ երբէք ձեռքս չէ հասած, տարակոյս չիկայ որ ինչ գրելիքնիդ դուք ալ չի գիտնալնուդ՝ նախամեծար համարեցիք լռել:

Կարծեմ թէ վերոյիշեալ իրողութեանց կամ վոխանակուած թղթակցութեանց մասին ու է անարկութիւն մը չունիք ընելիք:

Հիմա տեսնենք թէ ո՛ր աստիճանի

կարևորութեան արժանի է ձեր առաջ բերած այնմիակ պատճառաբանութիւնը որով իրաւունք ստացած ըլլալ կը կարծէք վերև բացատրուած անուրի ընթացքը բռնելու:

Երկար կամ դժուար չի պիտի ըլլայ այդ պատճառաբանութեան ոչնչութիւնը հաստատելը:

Կառարկէք թէ չէիք կրնար զբաղիլ այնպիսի խնդրով մը որով արդէն ուրիշ թերթ մը սկսած է զբաղիլ կամ կողմէք ըսել թէ չէիք կրնար հրատարակել ձեր թերթին մէջ յօդուած մը, որոյ քիչ կամ շատ նմանը ուրիշ թերթի մը մէջ արդէն երևան եկած էր ուրիշի մը ստորագրութեամբ:

Կը խոստովանիմ թէ առաջին անգամը ըլլալով ձեզմէ միայն կիմանամ թէ երբ ո՛ր եւ է թերթ ո՛ր եւ է խնդրով սկսի զբաղիլ, ուրիշ մի թերթի միւսնայն խնդրով զբաղիլը ստորագրութիւն մ'է սոյն վերջնայն խմբագրին: Այս օրէնքը կամ սովորութիւնը մի միայն ձեզ նման խմբագիրներու տեսչակին մէջ գտնուելուն համար, ուշագրութեանէս վրիպած ըլլալու է:

Սակայն վայրկեան մը ենթագրելով որ ձեր ըմբռնած եղանակը ճիշդ ալ ըլլայ, կրկին չէք կրնար արգարանալ, քանի որ այդ խնդրոյն տեղի տուող առաջին գրութիւնը «Արշալոյս»ի մէջ երևցաւ, որով իրաւացի էր պահանջել որ անոր հերքումն ալ «Արշալոյս»ի մէջ երևնայ: Ուրեմն ձեր ընթացքը միայն սա կ'ապացուցանէ թէ՛ դուք համախոհ եւ համակարծիք Տիար Լեւոն Մկրտիչեանի, մի միայն անոր ուղեղին արտագրութիւնները կրնաք «Արշալոյս»ի մէջ զետեղել, իսկ ձեր կարողութեանց հակառակ ո եւ է գրութիւն ոչ միայն չէք ընդունիր, այլ ամեն կերպով կաշխատիք անոնց հրատարակման արգելքներ յարուցանելու: Ահաւասիկ այս ըսածիս ապացոյցը:

Քանի որ երկուշաբթի առաւօտ արդէն որոշած էիք խոստումնիդ գրութելով յօդուածը չի հրատարակել, ինչո՞ւ սպասեցիք մինչև երեքշաբթի օր-

ուան կրկնակի հեռագիրներուս, որպէս զի ձեր որոշումը հաղորդէք:

Այդ որոշումնիդ վերջապէս հաղորդելու հետ միատեղ, ի՞նչ նպատակաւ ետ չ'դարձուցիք մի միայն հրատարակուելու պայմանաւ ձեզ յանձնուած ձեռագիրը: Մասնաւորապէս այդ հրատարակութեան համար վճարած գումարս միւսնայն ատեն ետ չի դարձունելուդ ալ՝ ձեզ կը թողում որոշել թէ ի՞նչ անուն տալ պէտք է:

Պէն. խմբագիր, կը հաշմանմ ձեզ թէ՛ ի՞նչ պէտք ունէիք այսչափ դարձուած քներ բանեցնելու, միթէ աւելի լաւ չէ՞ր ըլլար ո՞ր քիչ մը անկեղծութեամբ և ուղղման ութեամբ վարուելով, առաջին անգամ որ յօդուածը կարգացիք, պապատխանէիք ինձ սա պէս: Բարեկամ,

Նկատելով որ մի քանի շաբաթէ ի վեր «Արշալոյս»ը Ալեքսանդրիոյ Թաղ. Խորհրդոյ օրկանը ղրած եմ:

Նկատելով որ յիշեալ Խորհրդոյ հետ ունեցած պայմանագրութիւնս ուղղակի թերթիս գոյութիւնը կ'ապահովէ:

Նկատելով որ սոյն ձեռնարկիս յաջողութեան համար, Տիար Լ. Մ. մեծ դեր խաղացած է Թաղ. Խորհրդոյ քով:

Նկատելով ուրեմն որ նորա այս ձրի բարեխօսութիւնը զիս կը պարտաւորէ, անոր կիրքերը յագեցնող յօդուածները հրատարակել, իսկ անոր դէմ ո եւ է քննադատութիւն մերժել թերթիս մէջ, հետևաբար, չեմ կարող ընդունիլ թերթիս մէջ Թաղ. Խորհրդոյ կամ նորա գրագրին կարծիքները, որոշումները, կամքը, գործունէութիւնը, պաշտօնավարութիւնը քննադատող ո եւ է գրութիւն:


Կացութիւնը հիմակուրնէ աւելի թեթեւ կ'ըլլար որովհետև գոնէ քիչ մը անկեղծութիւն ցուցած կ'ըլլայիք այնպիսի անձերու, որոնց մօտ տակաւին քիչ օր առաջ բռնուն ճիզեր կը թափէիք, «Արշալոյս» ազգօգուտ և անկողմնակալ թերթ մը ըլլալը հաստա-

տելու համար:


Այժմ բաւականաչափ գաղափար մը կազմեցի թէ՛ ձեր և թէ՛ ձեր թերթին վերայ. ուստի ուշիշ բան չի մնար ինձ ընել, այլ պահանջել որ անմիջապէս ետ դարձունէք ձեզ յանձնուած ձեռագիրը և իբրև կանխավճար առած գումարներդ, դողդոջներով միանգամայն «Արշալոյս»ը զրկելիցդ, վասն զի, շիտակը ըսելով, բնաւ պէտք չեմ տեսներ այսպիսի քաղաքական — գրագիր — խեղճագիր երբեակ նիզակակցութեան մը, օրկանը:

Վ. ԽՕՐԱՍԱՆՃԵԱՆ

Աղեֆասէրիս 17 Օգոստոս 1901



Պ. ԼԵԻՈՆ ՄԿՐՏԻՉԵԱՆԻՆ



Ձեր թեւարկութեան տակ առած «Արշալոյս»ին մէջ կարգ մը սուտ ու փուտ դարձուածներով խաբել կ'ուզէք ժողովուրդը, որուն դէմ գործածած լեզունիդ՝ ինչ գոյնէ ու խառնուածքէ ըլլալնիդ կը հաստատէ:

Պ. Յօգուածագիրը մոռցա՞ւ անցեալը. իրեն հետ մէկտեղ եկած ենք հոս. ինք գրագիր, մենք խոհարար: Ինձի պէս շատեր կան, բոլորն ալ խոհարար հաստատողներ, որոնք գոնէ իրեն պէս կախուած չ'են այս ինչ աղաքին կամ պէյին կամքէն, և ո՛չ ալ իր կարծել ուղածին չափ միամիտներ են. անոնք, ազգ. յարկին տակ անցած դարձածներուն մօտէն թէ հեռուէն լաւ ծանօթ, գործուած զեղծումները լսած, բայց լռութիւն պահած են:

Սակայն Պ. Լ. Մկրտիչեան ինք անձամբ կուգայ արձըկել այդ կծիկի ճորճ և լռութիւն պահողներին առիթ փուտայ որ հրապարակ ելնեն պաշտպանել իրենց սուրբ իրաւունքները:

Պրն. Մկրտիչեան կրկնելով միշտ «Աղմկայոյ՞ խեղճակ» բառերը, իր կեղտոտութիւնն ու ինչ աստիճանի ցա-

ծութիւնը հրապարակ կը հանէ. ու իր թունաւոր գրիչով, իբր փաստ 'ի ձեռին, կը նշանակէ Թաղ. Խորհուրդին 1899 Ապրիլին քուէարկութեամբ ընտրուած ըլլալը, 99ի վերջերը նրանից երկու քին ինչ ինչ պատճառներով հրաժարիլը, եւ Դեկ. ի վերջ նրանց յաշորգելը, երկու օժանդակ անդամների, ու, կը պնդէ թէ՛ Սահմանադրութեան 56րդ յօդուածի համաձայն թաղական Խորհուրդը իրաւունք ունի իւր պաշտօն մինչև 1903 տարուայ Մայիսի սկիզբ շարունակել:

Յօգուածագիրը այդպէս դրելու իրաւունք կ'ունենայ, բայց ե՞րբ. երբ Առաջնորդի «վ որ ալ ըլլայ» ներկայութեամբ ու նախագահութեամբ ընտրութիւններ լինին. այն ատեն 4 տարի պաշտօն կրնայ շարունակել: Սակայն ի՞նչ ըսենք, երբ 'ի դիտութիւն բոլորիս, եզրագոյնի ժողովուրդ, տարիներէ 'ի վեր ամեն ամիսը անգամ մը բաշաների, էֆէնտիների նիստ կը լինէր, Առաջնորդ մը ձեռք բերելու համար, որու մասին այնչափ շփումներ տեղի ունեցեր են Գահիրէի թերթերում վերջապէս յաջողեցան տեղույս Առաջնորդ ընտրել Գեր. Այվազեան Եպիսկոպոսը, ծերունազարդ ալեւոր, որ բաւական ժամանակ է տեղս է, լուռ. ո՛չ ապաքէն պէտք է Սրբազան Առաջնորդ, իր նախագահութեամբ ընդհ. ընտրութիւն ընել, որ կ'ընայ զտեղ կեղծերը՝ անկեղծներէն, ազգատեացները՝ ազգասէտներէն, խորամանկ աղուէսները՝ ազգին զարգացման անձնուէրներէն եւն: Ու այս Սրբազան Առաջնորդին կատարելիք գործն է. այն ատեն իր հօտին հովիւ կը կարգուի եւ իւր հովուութեան պաշտօն լիովին կը շնորհաւորուի, ինչպէս կը գրէ Աւետարանիչը. «Հովիւ Գաջ դնէ, զանձն իւր 'ի վերայ ոչխարաց»: Իսկ եթէ Սրբազաննիս՝ Պ. յօգուածագրի խորամանկ դարձուածներին գործիք եղած է, ըսելիք մը չ'ունինք: Միայն կրնանք արդար բողոքի ձայներ արձակել. «Աւրոյց Եգիպտոս» իր հօտին Առաջնորդ

ջ'ունի. Գեր. Այվազեան մի պառլե-
պիսիոպոս է, հոս ապաստանած, —
ինչպէս Բարթողիմէոս, Դանիէլ ու
Վահրամ վարդապետները, — իւր հի-
ւանդութիւնը դարմանելու: Ինք
Գեր. Այվազեան մոռցած ըլլալու չէ՛,
թէ տարիներ առաջ մենք ի՞նչպէս
յաջողած ենք Սահմանադրութիւնը
գործադրել տալ բարձարու թուրքի
լուծին տակ, Վասպուրականի մէջ,
ուր ինք Սրբազանը գտնուած է ա-
տեն մը...:

Գալով մեր տեսակցութեան Պ.
յօդուածագիր Լ. Մկրտիչեանի հետ,
ամենուս ծանօթ է ոչ 5 տարի է հոս
գաղթած ենք. 5 տարի առաջ գաղ-
թական կը կոչուէինք, ուստի ձայն
չ'ունէինք, նոյնպէս ալ դուք Պ. յօդ-
ուածագիր, բայց ունէիք խորաման-
կութիւն ու ճիշդ իրոքիւն. քիչ ատենի
մէջ յաջողեցաք շահիլ մեր ջոշերուն
չնորհքը. ա՛լ սկսանք լսել մեր ականջ-
ներով ու տեսնել մեր աչքերով. վ'եր
Մկրտիչեան, վա՛ր Մկրտիչեան, Աղքա-
տախնամին դիմող՝ Մկրտիչեան, տղագ-
դպրոց դնել տուող՝ Մկրտիչեան. վեր-
ջապէս աղգ. յարկին ի՛նչ դիմումներ
որ լինէին, Մկրտիչեան, Մկրտիչեան.
ու այսօրուան «Սահմանադրութեան
Պաշտպանները» վերնագրով յօդուածը
գրողը դարձեալ Մկրտիչեան. ըսել է
թէ՛ ո՛չ Առաջնորդ, ո՛չ Թաղ. Խոր-
հուրդ, ո՛չ Պէյ մէյ, մէկ խօսքով ո՛չ
մէկը չ'կայ:

Յօդուածագիրը կ'ըսէ թէ՛ 1899ին
Իեկտ. ին կարգուած երկու օժանդակ
անդամներին ո՛չ ոք դիտողութիւն
չ'ըրաւ. և անամօթաբար կը տողէ թէ՛
մինչև Առաջնորդ Սրբազանի գալուստ՝
ժողովուրդը պապանձում Ձաքարիայի
պահեց. ու ատով կուզէ արգարացնել
ինքզինք:

Ձէ՞ որ գաղթական էինք ձայն
չ'ունէինք, իսկ եթէ ունէինք, որո՞ւ
պիտի բողոքէինք, երբ Առաջնորդ մը
չ'ունէինք. երբ քուէարկութեան մաս-
նակցել ուզէինք, երեսներս ՚ի վեր կը
պօռային. «Իրաւունք չունիք չուէ տա-

լու գաղթական էք»: Իսկ այժօր գաղ-
թականութեան հետք անուն չ'մնաց.
մենք այժմ տեղացի կամ Եգիպտացի
ենք, հաւասար իրաւունքով, սկսեալ
Պէյէն մինչև կօշիկ յետին ներկարարը:

Ուրեմն, ձեր խղափուր, կօկօգափիջ
և ուրիշ գործածած անականները յօ-
ժարութեամբ ետ առնելու էք, որով-
հետև ձեզի կը պատկանին. իսկ ձեր
օձու նման երկու ճիւղէ լեզուով ար-
տասանած բառեր «Աստուծոյ սիրուն,
պարուններ, Սահմանադրութիւնն ձե-
զիպէսներէն պաշտպանուելու պէտք
չունի, քողէ՛ք անոր օձիք», ճշմարիտ
է. ձեր գերագոյն շահերու կը դպչի:

Այսչափս բաւ համարե՛նք, արդոյ
ժողովուրդին թողունք պակասը լրա-
ցընելու: Կ'զգուշացնենք մեր եղբայր-
ները չի խտրուիլ փողոցները պարտող
ու ստորագրութիւն հաւաքող քանի մը
միա՛հիտ գործակալներէ, որոնք «ո՛չ
գիտեն զի՛նչ գործեն»ը կը յիշեցնեն...:

Իսկ մենք, Վասպուրականի արծ-
ուի ձագեր, եւ Ռշտունեան արի սրբ
զաւակներ, նոյն իսկ իբրև աղգ. ան-
հատ, կը պահանջենք մեր արգար իրա-
ւունքը. ո՛չ թէ պղտոր ջուրի մէջ ձուկ
որսալու, այլ շահամոլ խառնակիչներ
արտաքսելու, իրենց դիմակներ վար
առնելու, մինչև ոչ հրապարակին վրայ
փայլի ճշմարտութեան եւ արգարու-
թեան Արևը:

Վանեցի խոհարար
ՄԿՐՏԻՉ ՇԱՏԱԽՅԵԱՆ

19 Օգոստ. 1901

Ք Ր Ո Ն Ի Կ

Ա. Ձ Գ Ա Յ Ի Ն

— Կեղծ Հանրագրութիւն մը. — Գա-
նի մ'օր է որ թուղթ մը կը պտտցնեն
փողոցները. այդ թուղթին մէջ տեղիս
առժամեայ Թաղ. Խորհուրդը հանուած
է իններորդ երկինքը, և փափագ յայտ-

նուած է անոր պաշտօնավարութիւնը
չարունակել տալու:

Ողորմելի՛ միջոց. ա՛յ յապի ինկած
է Պատ. Թալ. Խորհուրդ մը, որ մու-
րացուած ստորագրութեանց ուժովը
պիտի ճգնէ՛ր կանգնելու: Մենք այդ
միջոցը կ'անուանենք ապուշ ու վճան-
գաւոր միջոց. ապուշ, եթէ միամտօրէն
յղացուած է անի. վասն:գաւոր՝ եթէ
չարամտօրէն է: Սակայն, ի՞նչ հարց
կար պաշտպանելու ելնել Խորհուրդ
մը, որուն դէմ ո՛ր և է հակառակու-
թեան սգի չ'կայ. ի՞նչ ծանուցեալ 210
ստորագրութիւնները կրող հանրագրու-
թեան՝ նպատակն ա՛յդպէս կ'ըմբռնեն
անոնք, որ այդ նոր հանրագրութիւնը
կը նետեն հրապարակ, և երբեմն սղո-
քանքով ու յաճախ սպառնալիքով ստա-
րագրութիւն կը փորձեն յափշտակել
պտրկեչտ գործաւորներէ ու արհեստ-
ւորներէ, անոնց պաշտպաններուն ազդե-
ցութիւնը բանեցնել տալով այդ խեղճ
պաշտպանեալներուն վրայ: Մի՞թէ
210 ստորագրութեանց տէրերը՝ տա-
պալի՞լը կը պահանջէին ներկայ առ-
ժամեայ վարչութեան, թէ Սահմանա-
դրութեան գործադրութիւնը: Պէտք է
լաւ գիտնալ թէ՛ անոնք, կարգ մը
հացկատակներէ ու շահամուլներէ բու-
լոբովին տարբեր կերպով կը յարգեն
վարչութեան գլուխը դանուող անձնա-
ւորութիւնները, անհատի հետ գործ
չ'ունին անոնք, օրէնքի՛ն գործադրու-
թիւնը կուզեն, ինչ որ բանաւոր է եւ
արդար, տրուած ըլլալով թանկագին
աշատութիւնը, զոր կը վայելէնք նորին
Խտիվական բարձրութեանը լուսամիտ
կառավարութեանը, մանաւանդ, ոգի-
ովն ու կազմութեամբը դերաշնչա-
պէս սահմանադրական Մեծին Բրիտա-
նիոյ հզօր հովանաւորութեան տակ:

Կարելի՞ է ծիծալը բռնել, երբ
մարդ կը տեսնէ ունայն ճիգերը, թա-
փուած քրտինքը, ստորագրութիւններ
մուրալու համար: Հապա ի՞նչ ըսենք
այն ողորմելի՛ միջոցին, զոր ձեռք ա-
ռած են եղեր ստորագրութեանց այդ
մուրացկանները... «ո՛վ որ չ'ստորա-

գրէ, ի՛նչ գիտէ»... հէ՞, ի՞նչ ըսել
կ'ուզուի. պիտի աքտորուի՞, պիտի
բանաարկուի՞... Ո՛ւր ենք, Փոքր Ա-
սիո՞յ թէ Հայաստանի խորերը...
Սպուշ բան է կարծել թէ Աղբ. Օրէն-
քին անխափան գործադրութիւնը պա-
հանջող ո՛ր և է անհատ երթարկուի կա-
մայական խտուրթեանց, ո՛ւր մնաց թէ
պատկառելի հասարակութիւն մը:

Այսօր կ'ապրինք Եգիպտոսի մէջ-
ուր, մէն մի անհատ, ուսմիկ թէ տոհ-
միկ, միևնոյն իրաւունքները կը վա-
յելէ ու միևնոյն օրէնքներուն կը հպա-
տակի, առանց դոյզն տարբերութեան:

Հանրագրութեան ստորագրու-
թեաց 210 տէրերը չ'պիտի ներեն ան-
շուշտ որ իրենց անունները, մասնաւոր
թղթի մը վրայ ընդօրինակուած, հրա-
պարակի վրայ շրջաբերուին. չ'պիտի
ներեն որ իրենցմէ ոմանց դիմումներ
ըլլալով իրենց ստորագրութեան յետս
կոչու՛մ առաջարկուի... Հանրագրու-
թիւնը յանձնուած է Սրբազան Առաջ-
նորդ, Գեր. Տ. Յովսէփ Եպ. Այվազ-
եանի. ի՞նչպէս կ'ըլլայ որ, նորին
Սրբազնութիւնը Գահիրէ ելնելէ յետոյ՝
հանրագրութեան ստորագրութիւնները
ձեռքէ ձեռք կ'անցնին...:

Եզրակացնենք.

Տեղւոյս առժամեայ Թալ. Խոր-
հուրդը — թէ իսկ ըլլար տիպար Խոր-
հուրդ մը, իր գործունէութեամբը,
վարկովն ու ձեռնհասութեամբը — մու-
րացուած կ'ամ կորզուած ստորագրու-
թիւններով լեցուած հանրագրութեան
մ'ուժովը չէ՛ որ պիտի կարենայ մնալ
պաշտօնի վրայ, ո՛չ ալ իր կա՛նոյիս
առժամեայ հանգամանքովը, այլ Օ-
րէնքին, ու մի՛ միայն Օրէնքին թոյլա-
արութեամբը: Հո՛ս է հարցը...:

— Սէմաէօր եւ Բրդի Մարտէյնէ
լրագիրներուն մէջ ուրախութեամբ
կարգացինք յաշոռութիւնը, զոր այս
տարուան հարցաքննութեանց ցոյց
տուած են ազգային վաղեմի գործիչ
Տիար Մ. Բօրթուգալեանի երկու զա-
ւակները Պ. Վահան եւ Օր. Շուշանիկ
Բօրթուգալեան, երկուքն ալ պատուոյ

վկայական ու Մրցանակ ստանալով Մարտիրոյ Լիկեոնի Տեսչութեանէն:

Մեր սրտագին խնդակցութիւնները մեր Պատ. Պաշտօնակցին:

— Պ. Մանթաշեանցի տեղոյս առժամեայ ներկայացուցիչ Պ. Աւետիք Լալայեանց 1 տարեկան «Փիւնիկ» նուիրեց Գահիրէի Լսարան-Ընթերցատան ընկերութեան, որ հետեւեալը զրկած է ՚ի հրատարակութիւն:

Գահիրէ 18 Օգոս. 1901

Տէր Խմբագիր.

Լսարան - Ընթերցատան Գործ. Վարչութիւնս հաճելի պարտք մը կը կատարէ իր սրտագին շնորհակալութիւնը յայտնելով Պատ. «Փիւնիկ»ի միջոցաւ Առ Ազն. Պրն. Աւետիք Լալայեանց, որ հաճած էր մէկ տարուան «Փիւնիկ»ի նուիրումով իր գործնական համակրութիւնը ցոյց տալ զէպ ի Լսարան - Ընթերցատունս:

Ընդունեցէք, Տէր Խմբագիր, մեր անկեղծ յարգանաց հաւաստին եւն:

Ի Իմաց Գործ. Վարչութեան

Ատենագպիր

Ատենապէտ

Ս. Զարեհեան

Ս. Օտապաշեան

Ա Ր Տ Ա Ք Ի Ն

— Ծրանգերութիւն Տազնասր. — Կ. Պոլսէն հասած այս շաբթուան հեռագիրները խիստ վտանգաւոր կը ներկայեն կացութիւնը: Ծրանսական Իեսպանը Իրան հետ յարաբերութիւնները խզեց, որովհետեւ Սուլթանը դրժած է հինգշաբթուան ունկնդրութեան մէջ, քարտիանց գնման և Ծրանսայի գրամական պահանջումներուն նկատմամբ ըրած խոստումին: Պ. Իոնսթան Կ. Պոլսէն պիտի մեկնի 48-72 ժամուան մէջ ու Փարիզի Թրքական Իեսպանն ալ իր անցագիրները պիտի առնէ ճամբուի: Ծրանսա կրնայ Իոնէն վրէժ լնծել լիակատար ազատութիւն տալով Երիտասարդ Թուրքերուն և Մաքսի պաշտօնատունը գրաւելով մինչեւ որ պարտքը վճարուի, կամ, Վոսիտրի

մէջ նաւային ցոյց մը պիտի կրնայ ընել: Գասառ մարտանաւը ճամբոյ ելած է զէպ ՚ի Պոլիս, նաւատորմիկն մէկ մասն ալ կազմ եւ պատրաստ է մեկնելու:

— Արիսականի վրայ. — Իտալիան ու Աւստրիան կը մրցին իրարու հետ ձեռք դնելու Ալբանիոյ վրայ, որ Թուրքիոյ կը վերաբերի: Թուրք կառավարութիւնը հրաման տուաւ Նպիւրոսի և Ալբանիոյ մէջ Ադրիական եզերքի բերդերն ամրացնելու, Բրէվէզայէ Վալօնէ, այս կերպով պատասխանելով նաւային ցոյցերուն Իտալիոյ և Աւստրիոյ, որոնք Ադրիականի հաւասարակշռութեան վրայ կռիւ կ'ընեն:

— Ռուսիոյ ՚ի Մանչուրիա. — Շանհայէ Կոսյի կը հեռագրուի թէ՛ Նիու-Շանկի ռուսական իշխանութիւնները չինարէն յայտարարութիւն մը հրատարակած են ծանուցանելով թէ՛ Ռուսիոյ գերիշխանութիւնը կը տարածուի բովանդակ նահանգին վրայ, Ասոր վրայ, չինական օրէնքները չնշուած եւ ասոնց յաջորդած են ռուսականները: Չինաց ու օտարաց միջև բոլոր վէճերը պիտի կարգադրուին ռուս դատարաններով:

— Իրիսի թաղման հանդէսին մանրամասն նկարագրութիւնը կը բերեն Հռովմէն հասած թղթակցութիւնները. 100,000է աւելի յուզաշիւաւորներ ներկայ եղած են. ամեն կողմէն փունջեր ու պսակներ տեղացած են դադաղին վրայ. վերջապէս մեծ դիւանագէտին համբաւին արժանավայել թաղում մը տեղի ունեցած է:

Տ Ե Ղ Ա Կ Ա Ն

— Լա Ռեժօրմ եւ Հայերք. — Տեղական Լա Ռեժօրմ օրաթերթէն կը քաղենք հետեւեալը.

«Մտիկ ըրէ՛ք ինչ որ կը պատմէ Հայ մը Պ. Վիգթօր Պէրարի».

«Էյուպ կ'երթայինք, Ֆէհմի բաշային տունը. շատ բարեպաշտ ծերունի մ'է, զոր Սուլթանը կ'ատէ և որ կ'ուզէ

էյուպի մէջ մեռնիլ ու թաղուիլ մզկի-
թին քով:

«Տարիէ մ'ի վեր Ֆէհմի (Լեւոնը չի
հասկցուի) կ'ըսէր Հայերուն. «Երբ Երլ-
տաղի մարդը ջարդէ քրիստոնեաները,
քովս եկէք ու ձեզ կ'ազատեմ ես»,
Ուստի ապաստանեցան իր տունը, բայց
պզտիկ էր ու արդէն լեցուած. մեզ
մզկիթը տարաւ ու ինձին ըսաւ. «Ա՛ռ
այս մարդիկն ու ազատէ՛»: Իմամը մեզ
բաիը մոյուց. հարիւրէ աւելի էինք.
մեզի բերին փոխաթներ ու թակոյլներ
և չորս օր հոն մնայինք. ամեն աւ-
տու և իրիկուն, թաղին Թուրքերը մե լի
կերակուր կուտային: Երկրորդ օրը
ջարդոյները հոն եկան զօրքերուն ու
ոստիկաններուն հետ: Կ'ուղէին բա՛լէն
ներս մանել ըսելով. «Տէրը թոյլ կու-
տայ Հայերը սպաննելու»:

Իմամը, որ կեցած էր գրան առջև,
ըսաւ անոնց. «Չ'եմ գիտեր ի՛նչ թոյլ
տուած է Տէրը. բայց Մարդարէն, որ
կը պատուիրէ սպաննել կուսպաշաները,
կ'արգիլէ սպաննել Գրքին աղգերը: Ա-
սանք քրիստոնեայ են ու չ'սխտի սպա-
նէք», և Սօժբաններն ու միւս իմամները
մուտքը կ'արգիլէին անոնց»:

ՄԵՐ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒՆ

Կը յանձնարարենք «Փիւնիկ»ի յա-
ջորդ թիւին պարունակութենէն հե-
տեւեալ յօդուածները.

1. Աղեքո. Աղգ. Երկ. Վարժարա-
նին հրատարեալ Տնօրէն Տիտո Յակովբ
Պէքարեանի «ԱՂԵՔՍ. ՎԱՐԺ. ԳԱՂՏ-
ՆԻՔԸ», շար. եւ վերջ.

2. «ԱՆԹԱՂ ԴԻԱԿԻ ՄԸ ՎՐԱՅ» Խըմ-
բադրականը.

3. «ՕՏԱՐ ԴԷՄՔԵՐ» Գահիրէի Կեդր.
կրթարանին առաջին ընթացաւարտ Տ.
Վահէ Վ. Շամլըեանի Անգլիական
Review of Reviews թերթէն քաղած խիստ
չահեկան կենսագրութիւնը Տօղդ. Տի-
լընի, որ հանրածանօթ է Մամուլին,

Հայաստանի Զարգերուն ժամանակ իր
մատուցած թանկագին ծառայութիւն-
ներով:

Գահիրէի Ակնայ Որբախնամին վե-
րաբերեալ «Հերթումի մ'առքի» Պ. Մ.
Մարդպանեանի զրկած յօդուածը պիտի
հրատարակուի նոյնպէս յաջորդ թիւով:

Վ Ր Ի Պ Ա Կ

Ներկայ թիւին մէջ.

Էջ 98 Ա. տողին մէջ ժամանակի
գրուած է, պէտք է կարգաւ ժամա-
նակիս.

Էջ 100 ԻԶ. տողին մէջ, «ՄՎ վար-
ժարանական պաշտպան»ը կարգաւ մՎ
վարժարանական շահերու պաշտպան

Էջ 100 ԺԲ. տողին մէջ փայտուն
էին չակերտով փակուած է. Խճչպէսէն
առաջ փակագիծ պէտք է ըլլայ:

Էջ 103 Է. տողին մէջ, վաղն առ-
տուան հաւնարէն վերջը կարգաւ. ժա-
մագրութիւն ըլիք սրպէս զի վաղը,
կիրակի օրով, զինքը՝

Էջ 104 ԺԳ. տողին Յաւեղուածը՝
պէտք է կարգաւ յօդուածը.

ԿԱԹՆԱՏՈՒՆ - ՃԱՇԱՐԱՆ

ՆՈՐ ԴԱՐ

Այս նոր բացուած ճաշարանին ա-
ռաւելութիւններն են. ծովեղերեայ
օդ, ամենամաքուր սպաս, և խնամ-
եալ սպասարկութիւն, — ինչ որ կը
փնտռուի յաճախ ուրիշ ճաշարանաց
մէջ: —

Կերակուրները պոլսական ճաշ-
կով պատրաստուած, իրենց համեղ ու
այլազան հանգամանքներով արժանի
են ամենապահանջկոտ քիմքերու գնա-
հատման:

Իմեցէ՛ք նոր Դարի ճաշարանը,
Ապու Չատըր փողոցին մէջ, Ղալար-
եան Եղբարց Վաճառատան գիմաց.
գնացէ՛ք, ճաշակեցէ՛ք ու տեսէ՛ք:

SALAMANDER

ՍԱԼԱՄԱՆՏԵՐ

Սպահովագրական Ընկերութիւն
Ընդդէմ հրդեհի.

ԱՄՍԹԵՐՏԱՄ

Դրամագլուխ 3,125,000 Ֆրանգ

Սեն կերպ Սպահովագրութիւնք կ'ընդունուին ընդդէմ հրդեհի ինչպէս նաև Մովային, Գետային և Ցամաքային փոխագրութեանց արկածներու դէմ.

Դիւրամատչելի դներ և պայմաններ:

Դիւնչ առ Ընդհանուր Գործակալ եւ Լիւաշոր-Փոխանորդ

ՄԻՀՐԱՆ ԳԱԼՅԱՆՍ

Աղեփասնորիս, պլսիկ Մեկշիե Ապոստոսա շուրոց քիւ 10

L'ALLIANCE

Լ'ԱԼԻԱՆՍ

Մովային Ապահովագրական Ընկերութիւն.

ՊԵՐԼԻՆ

Դրամագլուխ 5,000,000 Ֆրանգ

ԴԵՂԱՐԱՆ

ԱՓՐԻԿԵԱՆ

PHARMACIE D'AFRIQUE

Սոյն միամեայ հաստատութիւնը վերջերս աւելի ճոխացուցած ենք բերել տալով եւրոպական ամեն տեսակ ընտիր դեղորայք, սրէսիալիթիներ եւ հանքային թարմ շուրեր:

Յաճախորդները կրնան ապահով ըլլալ դեղերուն ինամեալ եւ արագ պատրաստութեան ու գիներու չափաւորութեան մասին:

Իեղարանս կը յաճախեն Հայ եւ օտար բարեհամբաւ բժիշկներ ինչպէս նաև հանրութեան ծանօթ վկայեալ ու փորձ մանկաբարձներ:

ԳԷՈՐԳ ԹՕԳԱԹԵԱՆ

ԿԱՆԵՂԻՆԱՅ ՅԱՐԴԱՐԻՉ (Tapissier)

Քաղաքիս երեւելի հայ տուններուն ծանօթ յաճախորդ, կը պատրաստէ դոհացուցիչ պայմաններով ամեն տեսակ կահեղէններ, վարագոյր, ևն:

Յանձնարարութիւնք խնամով կը կատարուին:

Դիւնել Հայկ. Մեծ Սրճարանը:

ՀԱՄԲԱՐՉՈՒՄ ՄՈՒՂԱԼԵԱՆ

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԿՕՇԿԻ, ԳԱՆԹՕ

Արանց, կանանց ու մանկանց ամեն տեսակ կօշիկներ չափի վրայ ու պատրաստ, կը վաճառէ. ապրանքները մաքուր, տոկուն ու ձեւուր. կը մրցի բոլոր օտար վաճառատանց հետ, գիներուն աժանութեան կողմէն:

ՆՈՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՃՍՇԱՐԱՆ

Մեկշիե Հայկ. Մեծ Սրճարանին ետին

Յաճախորդները պիտի գտնեն զով ու օգուէտ տեղ մը, մաքուր սպասարկութիւն, համեղ ու պէս պէս կերակուրներ, քաղցրաւենիք, միւրգեր, ըմպելիք ևն. խիստ չափաւոր գիներով:

Բաժանորդագրութիւն կ'ընդունուի կանխիկ վճարումով ու գոհացուցիչ պայմաններով:

Այցելեցէ՛ք մէկ անգամ ու պիտի տեսնէք նոր ճաշարանին առաւելութիւնը: